



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N \_\_\_\_\_

\_\_\_\_\_ 2012 թ.

Քաղաքացի Միքայել Մելքումյանին  
հասցե՝ ք.Երևան, Զրվեժ 46 փող.,  
տուն 70-72

Կից ուղարկվում է Ձեր 09.01.2012թ. գանգատի վերաբերյալ ՀՀ  
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի  
գանգատարկման հանձնաժողովի 03.02.2012թ. թիվ 5/2 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման  
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/2

3 փետրվարի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 17.01.2012թ-ի նիստում քննության է առնվել քաղաքացի Միքայել Մելքումյանի 09.01.2012թ. դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ. 30.12.2011թ. թիվ 1410312 արձանագրության դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ արձանագրությունը թողնվել է անփոփոխ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30.12.2011թ. թիվ 1410312 արձանագրությամբ (այսուհետ՝ արձանագրություն) մասնավորապես արձանագրվել է հետևյալը:

<Օպերատիվ-հետախուզության մասին> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն, մասնակցությամբ քաղաքացի Միքայել Մելքումյանի, կազմվել է սույն արձանագրությունը առ այն, որ քաղաքացի Միքայել Մելքումյանը Երևան քաղաքի Պ.Սևակի 9 և 5/14 հասցեում առանց պետական գրանցման, առանց հարկային մարմնում հաշվառման, առանց համապատասխան լիցենզիայի իրականացնում է բնակելի շենքի կոնստրուկտիվ կմախքի ռետինեմետաղական սեյսմամեկուսիչներով սեյսմամեկուսացման կոնցեպցիայի ստեղծման նախագծային հաշվարկային աշխատանքներ, խորհրդատվություն և կոնստրուկտորական նախագծի իրականացման աշխատանքներ: Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ պետի 30.12.2011թ-ի թիվ 456-1 որոշումն անուղղակի եղանակով հաշվարկվել է քաղաքացի Միքայել Մելքումյանն ապօրինի գործունեության արդյունքում ձևավորված իրացման շրջանառության չափը (համախառն եկամուտը):

Ըստ արձանագրության, քաղաքացի Միքայել Մելքումյանն ապօրինի կարգով տվյալ գործունեությամբ զբաղվում է 2010թ-ի դեկտեմբերի 1-ից, և առ արձանագրման պահին իրացման շրջանառությունը (համախառն եկամուտը) կազմել է 12800000 դրամ: Իրացման շրջանառության (համախառն եկամտի) մեծությունը հաշվարկվել է հիմք ընդունելով <Իտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ սկզբնական հաշվապահական փաստաթղթերը (պայմանագիր, դրամակղի ելքի օրդերներ, ծածկված աշխատանքների ակտեր): Արդյունքում արձանագրությամբ լրացուցիչ վճարման ենթակա գումար է առաջադրվել ընդամենը 7720000 դրամ, այդ թվում՝ <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված տուգանք 6400000 դրամ, <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված տուգանք 1280000 դրամ, <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված վնասի հատուցում 40000 դրամ:

Քաղաքացի Միքայել Մելքումյանի գանգատում մասնավորապես նշված է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2011թ-ի նոյեմբերի 28-ի թիվ 01/3-1/8755-11 գրությանը, որտեղ հարցում էր արվում մի շարք տարբեր պայմանագրերի վերաբերյալ, ՀՀ Քաղաքաշինության նախարարության <Լիցենզավորման կենտրոն> գործակալության կողմից պատրաստված պատասխան նամակում, հղում անելով <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենքին և այլ փաստաթղթերին, ընդհանրացված գրված է, որ <...պայմանագրերում նշված գործունեությունները ենթակա են լիցենզավորման>: Այդ պայմանագրերից մեկը վերաբերում է <Իտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ-ի և իմ միջև կնքված ծառայությունների վճարովի մատուցման վերը նշված պայմանագրին: Տվյալ պայմանագրի առաջին կետի 1.1 ենթակետով ինձ պատվիրվում է կատարել <...բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի կոնստրուկտիվ կմախքի ռետինեմետաղական սեյսմամեկուսիչներով սեյսմամեկուսացման կոնցեպցիայի ստեղծման նախագծային հաշվարկային աշխատանքներ, խորհրդատվության և կոնստրուկտորական նախագծի իրականացման հեղինակային հսկողություն>: Ահա այս աշխատանքներն են, որ <Լիցենզավորման կենտրոն> գործակալության կողմից համարվել են լիցենզավորման ենթակա և արդյունքում պետական եկամուտների կոմիտեն համարում է, որ ես վերը նշված աշխատանքները կատարել եմ չունենալով համապատասխան լիցենզիա:

Սույն դիմումով, բոլորովին նպատակ չունենալով խոսափել պատասխանատվությունից (եթե այդպիսին իսկապես կա), ցանկանում եմ պարզաբանել, որ պայմանագիրը ստորագրելիս ես, ի պատասխան իմ բանավոր հարցումներին ինձ պատվիրվող աշխատանքների վերաբերյալ, <Իտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ-ից ստացա հավաստիացումներ այն մասին, որ տվյալ աշխատանքները լիցենզավորման ենթակա չեն: Համաձայն եմ, որ ես չպետք է կուրորեն հավատալի պատվիրատուի հավաստիացումներին, այլ պետք է պայմանագիրը ստորագրելուց առաջ խորհրդակցելի

համապատասխան մարմինների հետ: Ընդունում եմ իմ սխալը: Սակայն, հավատացնում եմ, որ նշված պայմանագրի շրջանակներում իմ կողմից մատուցված վճարովի ծառայություններն իրենց էությունը հանդիսանում են միայն և միայն մտավոր ստեղծագործական աշխատանքներ, որոնց արդյունքում ես պատվիրատուին ներկայացրեցի սեյսմամեկուսացման գաղափարը և իրենց կողմից առաջարկված կոնկրետ շենքում սեյսմամեկուսացման համակարգի ներդրման համար հնարավոր մոտեցումները:

Ինչ վերաբերում է <...նախագծային հաշվարկային աշխատանքներին...>, ապա հայտնում եմ, որը այդ աշխատանքերը կատարվել են <Ֆուլ-Արտ> ՍՊԸ-ի կողմից: Թյուրիմացությունն առաջացել է <Իտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրում տեղ գտած ոչ ճիշտ բառակապակցության արդյունքում: Սակայն, նշված պայմանագրի շրջանակներում ես կատարել եմ խիստ գիտական վերլուծություն, դիտարկելով հաշվարկների տարբերակներ, կիրառելով մոդելավորման զանազան մոտեցումներ, որոնք որ առաջին մոտավորությամբ հնարավորություն են տալիս որոշելու սեյսմամեկուսացման հարթության դիրքը շենքում, սեյսմամեկուսացման համակարգի արդյունավետ աշխատանքի համար կոնստրուկտիվ կապող տարրերի մոտավոր կտրվածքները և սեյսմամեկուսիչների մոտավոր քանակը: Այս ամենն անելու համար պետք է ունենալ բարձր որակավորում և համապատասխան գիտելիքներ: Ցավոք ներկայումս հանրապետությունում բացի ինձանից դա ոչ ոք չի անում:

Ուզում եմ պարզաբանել և վերահաստատել, որ կատարված գիտական վերլուծական-հաշվարկային աշխատանքները հիմք են ծառայել հետագայում նշված շենքի նախագիծը մշակելու համար: Սա է պատճառը, որ պայմանագրում նշված է <...նախագծային հաշվարկային...> բառակապակցությունը: Ես ընդունում եմ, որ գուցե այս բառակապակցությունը հաջող չի և ճշգրտորեն չի արտացոլում իմ կատարած խորհրդատվական աշխատանքի բուն էությունը: Այդ իսկ պատճառով հայցում եմ. Ձեր ներողամտությունը և հուսով եմ, որ կհամաձայնվեք ինձ հետ, որ տրված պարզաբանումները բավարար հիմնավոր են, որպեսզի իմ կողմից կատարված աշխատանքները չհամարվեն լիցենզավորման ենթակա:

Նմանատիպ պարզաբանումներով 2011թ-ի դեկտեմբերի 29-ին ես դիմեցի << Քաղաքաշինության նախարարության <Լիցենզավորման կենտրոն> գործակալությանը, խնդրելով օգնել ինձ պետական եկամուտների կոմիտեի հետ իմ ունեցած խնդիրը հարթելու գործում, վերանայել գործակալության կողմից կոմիտեին ուղղված գրությունը և ի լուսն դրան, եթե գործակալությունը հնարավոր կգտներ, պատասխանել իմ դիմումին, արված պարզաբանումների լույսի ներքո, մասնավորեցնելով, որ իմ կողմից կատարված պայմանագրային աշխատանքները ենթակա չեն լիցենզավորման: Խնդրեցի գործակալությանը պատճենը ուղղել նաև << ԿԱ ՊԵԿ նախագահին: Նույն օրը թիվ 22/22.1/6658-11 գրությամբ <Լիցենզավորման կենտրոն> գործակալությունն արձագանքեց իմ խնդրանքին, որտեղից փաստացի հետևում է, որ <Իտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ-ի և իմ միջև 2010թ-ի դեկտեմբերի 1-ին կնքված պայմանագրով իմ կողմից մատուցված վճարովի ծառայությունները լիցենզավորման ենթակա չեն:

Վերոգրյալը հաշվի առնելով, թախանձագին խնդրում եմ վերանայել << ԿԱ ՊԵԿ ՕԿԿ-ի կողմից իմ նկատմամբ կատարված գործողությունները և որոշումները ու բավարարել իմ բողոքարկումը:

<< ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը լսելով քաղաքացի Միքայել Մելքումյանի և արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն <Իտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ-ի և քաղաքացի Միքայել Մելքումյանի միջև 01.12.2010թ-ն կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի 1.1 կետի, Միքայել Մելքումյանը պարտավորվել է կատարել Պ.Սևակի 9 և 5/14 հասցեներում կառուցվող բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի կոնստրուկտիվ կմախքի ռետինամետաղական սեյսմամեկուսիչներով սեյսմամեկուսացման կոնցեպցիայի ստեղծման նախագծային, հաշվարկային աշխատանքներ, խորհրդատվության և կոնստրուկտորական նախագծի իրականացման հեղինակային հսկողություն, իսկ <Իտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ-ն պարտավորվել է վճարել այդ ծառայությունների համար:

Վերոգրյալ պայմանագրով նախատեսված գործունեությունը քաղաքաշինական փաստաթղթերի մշակման ու փորձաքննության գործունեություն հանդիսանալու, ինչպես նաև այն լիզենզավորման ենթակա գործունեություն համարվելու վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով << ԿԱ ՊԵԿ նախագահի 28.11.2011թ-ի թիվ 01/3-1/8755-11 գրությամբ հարցում է կատարվել << քաղաքաշինության նախարարությանը (լիցենզավորող մարմին): << քաղաքաշինության նախարարի 08.12.2011թ-ի թիվ 01/22.1/6187-11 պատասխան գրությամբ պարզաբանվել է, որ համաձայն <Լիցենզավորման մասին> << օրենքի, << կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշման և << էկոնամիկայի

նախարարի հրամանով հաստատված 2009 թվականի հունիսի 30-ի թիվ 372-Ն դասակարգչի, պայմանագրում նշված գործունեությունները ենթակա են լիցենզավորման:

Քննարկվող դեպքում <Իտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ-ի և քաղաքացի Միքայել Մելքումյանի միջև 01.12.2010թ-ն կնքված պայմանագրի համաձայն, Միքայել Մելքումյանը առանց պետական գրանցման, առանց հարկային մարմնում հաշվառման և առանց համապատասխան լիցենզիայի իրականացրել է <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեություն, որի համար կիրառվել են ՀՀ օրենսդրությամբ նախաձեռնված պատասխանատվության միջոցները:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

Քաղաքացի Միքայել Մելքումյանի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 2011 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1410312 արձանագրության վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը համարել հիմնավոր, իսկ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագիծը՝ ոչ հիմնավոր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ՝

ա) <Իտարկո Քոնսթրաքշն> ՓԲԸ-ի և քաղաքացի Միքայել Մելքումյանի միջև 2011 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված՝ վճարովի ծառայությունների մատուցման հանձնման-ընդունման ակտի համաձայն, քաղաքացի Միքայել Մելքումյանի կողմից մատուցվել են կառուցվող շենքի կոնստրուկտիվ կմախքի ռետինեմետաղական սեյսմամեկուսիչներով սեյսմամեկուսացման կոնցեպցիայի ստեղծման, հաշվարկային մոդելի մշակման խորհրդատվության և կոնստրուկտորական նախագծի իրականացման հեղինակային հսկողության ծառայություններ,

բ) քաղաքացի Միքայել Մելքումյանին ուղղված ու ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 22/22.1/6658-11 գրության համաձայն, վերոնշյալ աշխատանքների իրականացումը լիցենզավորման ենթակա չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը կրկին անգամ ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդի եզրակացությունը, գտնում է, որ գանգատը հիմնավոր է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30.12.2011թ. թիվ 1410312 արձանագրությանը:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ